

չափ որ նոյնները մատուցուին 'ի ձեռն անոնց որոնք գրաւած են այն իշխանութիւնը , եւ թէ հնազանդիք անոր հլու հպատակութեամբ եւ անձնանուէր ոգւով՝ սրպէս զի իւր երջանկախառ կառավարութեան ներքեւ կարենաք վերստին ստանալ ձեր ազատութեան եւ յաջողութեան վաղեմի անդորրութիւնն ու հանգիստը . Մենք ալ ձեր հաւատարմութիւնն ու հնազանդութիւնը նկատելով՝ Մեր եւ առաքելական Աթոռոյս հովանաւորութիւնն եւ հպաստն աւելի առատաձեռն եւ ազդեցիկ կերպով 'ի գործ դնենք թէ՛ վերոյսացեալ Լեւոնի եւ թէ՛ ձեզի : Տուեալ յԱւինեոն , յԳ. օրն ապրիլի , յԳ. ամի :

* * *

Մինչդեռ Պետրոս Եւրոպայի մէջ կը թափառէր եւ Լեւոն անուշով գիմուններ կընէր , առդին , Կիլիկիայի մէջ , ուրիշ նշանակելի գէպք մը պատահեցաւ :

Այն տարին որ Պետունդ կը վախճանէր Վենետիկի մէջ , Կոստանդին Գ ալ հոգին կաւանդէր Կիլիկիայի մէջ : Ասոր որդիներէն մին — Լեւոն — անմիջապէս գրաւեց գաւը , եւ տիրապետեց (1363—1365) . բայց տեսնելով իրեն դէմ հանուած խոչնդոտներն եւ իշխաններու մեքենայութիւններն ի նպաստ ուրիշ մրցակցի մը , որ Լեւոն Դ-ի ջամբաւաններէն Հեթումին աղան էր , ակամայ տեղի տուաւ (1) : Այս վերջինը Հայոց թագաւոր օծուեցաւ վերջապէս՝ Կոստանդին Դ անուշով (1365) :

(1) Այս Լեւոնի մասին մեր պատմիչները միաձայն լռութիւն մը կը պահեն . Բայց 1345-ին բուն իսկ Կոստանդին Դ-ի կողմէ գրուած հետեւեալ յիշատակարանը , որ ինձ ծանօթ է միայն Դիլօրիէի գրեհն (*Rec. Cr.* եր. 707) , կը վկայէ քե ինձր՝ Կոստանդին նոյն քուականին դեռ երկու զուակ ունէր Օշին ու Լեւոն անուշով . — « Ի քուականութեան Հայոց ՉԳԴ եւ Կոստանդին Հայոց տալայ ստացայ զսուրբ աւետարանս , որ է կազմեալ արժապեղէն եւ ոսկեղէն , նրկարակերպ գեղեցկութեամբ զարդարեալ , որ եւ ստացայ զսա յարգաւ արդեանց իմոց . զոր յառաջին նախնեաց մերոց հասեալ եղեւ առ մեզ նեան բարեաց , եւ նովաւ ետու զսուրբ աւետարանս ծածկեալ գեղեցիկ կերպարանաւ , եւ շնորհեցի զսա սրբոյ եկեղեցւոյ ըստ փափաքանաց սրբի իմոյ եւ մեծ յուսոյ , միշտ յիշատակ լինել ինձ եւ ամենայն զարմից իմոց եւ հաւրն իմոյ Տէր Պաղքին մարաշախտուն հանգուցելոյն առ Քրիստոս . այլ եւ վասն յերկար կենդանութեան մերոյ եւ աստուածապարգեւ որդւոցն իմոց Աւենի եւ Լեւոնի : » Ահա այս Լեւոնն է , որ իր հօրը մահուանէն յետոյ գրաւեց գաւը , իբրեւ օրինաւոր ժառանգորդ :